

Գ.Վ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱԶԳ, ԱԶՆ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Հոդվածում քննության են առնվում հայերեն *ազգ/ազն* արմատները, որոնք ունեն որոշ ածանցյալ ձևեր հայերենում և զուգահեռ ձևեր հնդեվրոպական (հ.-ե.) այլ լեզուներում: Բացահայտվել է, որ *ազգ* արմատը, որի զուգահեռ ձևերը կան նաև պահլավերենում և հունարենում միայն «ճյուղ» իմաստով, բնիկ հայերեն բառ է: Հնդեվրոպական (հ.-ե.) այլ, մասնավորապես՝ ռոմանական, գերմանական, սլավոնական, բալթյան լեզուներում այն առկա է ածականակերտ ածանցի ձևով կամ որևէ ազգի, սեռի, տեսակի պատկանելություն, ինչպես նաև ծագում ցույց տվող բառերում՝ իբրև վերջավորություն:

Առանցքային բառեր. *ազգ, ազն, հ.-ե. ածականակերտ ածանցներ, հնդեվրոպական լեզուներ, ոչ հնդեվրոպական լեզուներ:*

Հայերենի *ազգ* բառը Հ. Աճառյանը համարում է փոխառյալ պիլ. *azg* «ճյուղ» բառից: Ծագումը համարվում է հնդեվրոպական (հ.-ե.) նախամայր լեզվի *azgho* «ճյուղ» ձևը: Այլ ժառանգներն են՝ հուն. *ὄσχος, ὄσχη, ὄσχη* «ճյուղ, ծիլ, ընծյուղ»: Պիլ. բառի շարունակությունն է համարվում պրս. *āzax, āzay* «յօտեցեալ այրելի ճիւղք որթոց»: Ըստ ՀՀԲ-ի՝ ծագում է *ազն* բառից [1]:

Ազն (-զին, -ինք, -անց) «ազգ, սերունդ, ցեղ» բառը ստուգաբանված չէ: Ըստ Հ. Աճառյանի՝ որոշ լեզվաբաններ այն կապում են հայ. *ազգ* բառի հետ (Patrubany, Pedersen): Աճառյանն ինքը այն համարել է *անձն* արմատի կրկնակը, *անձն* մասնավոր և *ազն*՝ հավաքական իմաստով: *Նձ > զ* ձայնափոխության համար Աճառյանը համեմատել է *կորիզ > կողինձ* օրինակի հետ: Դիտարկումն ուշագրավ է հետևյալ առումով. եթե *ազն* արմատը ծագում է *անձն* բառից, ապա այն ևս պետք է համարվի բնիկ հայերեն բառ: Այս արմատով կազմված են բազմաթիվ բարդություններ՝ *դիցազն, հսկայազն, հայկազն/ հայկազեանք, թագազն, ազնիւ, ազնուական:*

Ազն արմատի հոգնակին է *ազինք*: Աճառյանը նշում է, որ *ազն* բառի եզակի գործածությունն անսովոր էր հնում: *Ազգը* գրաբարում եզակի է, սակայն թվում է, թե բառի մեկ այլ հոգնակի տարբերակ է հոգնակիակերտ մասնիկի ձայնեղացումով՝ նախորդող ձայնեղ զ-ի պատճառով: Գրաբարում հոգնակի թվի ցուցիչ ունեցող բազմաթիվ գոյականներ հետագայում ընկալվել են իբրև եզակի (*աչք, երկինք, մասունք, շրթունք*): Նույնը կարող էր կատարվել նաև նախագրաբարյան շրջանում:

Անձն (ձին, -ձինք, -ձանց) «մարդ» արմատի հ.-ե. նախածնը Հ. Աճառյանը համարում է *ang'hen* ձևը, պարզական արմատն է՝ *anə* «փչել, շնչել», որից սանս.

ániti «շնչում է», ánila «քամի», հուն. άνεμος «քամի», գոթ. us-anan «արտաշնչել», հւլ. vonja «գոլորշի», vonjati «հոտել»:

Միանգամայն համամիտ ենք Հ. Աճառյանի այն դիտարկմանը, որ հնում մարդիկ հոգին ըմբռնում էին իբրև շունչ կամ քամի, և շունչը, հոգին, քամին ծագում էին միևնույն արմատից: Աճառյանը բերում է նաև հետևյալ օրինակները՝ լատին. anima «օդի հոսանք, քամի, շունչ, հոգի», animus «հոգի» [2], թոխար. ānīm «հոգի», հիւլ. andī «հոգի», բրետոն. eneff «հոգի»: Հիռլ. aim «հոգի», որը սեռ. հոլովում ստանում է anme ձևը:

Այստեղ ավելորդ չէ հիշատակել *անուն* (*անուան*, *-անք*, *-անց*) արմատը, որն առաջին հայացքից կապ չունի լատին. anima «օդի հոսանք, քամի, շունչ, հոգի», animus «հոգի» արմատների հետ: Բնիկ հայ բառ է, ցեղակիցներն են՝ սանս. नामन [nāman], հայրս. nāma, պիլ. պրս. nām, աֆղան. nōm, քրդ. naw, ou. nōn, nōm, հուն. ὄνομα, լատին. nōmen, իտալ. nome, իսպան. nombre, ռումին. nume, գերմ. Name, անգլ. name, շվեդ. namn, դան. navn, հիռլ. ainm /հոգն. ainmann/, հիւլ.nafn, հզալլ. anu /հոգն. enuein/, կիմր. enw, կորն. hanow, ռուս. имя և այլն [1]: Աճառյանը նշում է, որ ըստ Հյուբշմանի՝ հայերենը ծագում է *anm̥/anom̥ նախածնից, հետագայում *անվան, *անուվան (հմմտ. բրբռ. *Անում*, *անըմ*): Թերված *անուան* (*անվան*) ձևի հետ համեմատելի են՝ դան. navn, հզալլ. anu (հոգն. enuein), կիմր. enw, կորն. hanow «անուն», բրետոն. eneff «հոգի»:

Պատահական չէ համեմատությունը բրետոն. eneff «հոգի» արմատի հետ: Փորձենք համեմատել հուն. άνεμος «քամի» և ὄνομα «անուն» բառերը, և ամեն ինչ պարզ կդառնա: Արդյո՞ք նույնը չեն լատին. anima «օդի հոսանք, քամի, շունչ, հոգի», animus «հոգի» և հայերեն *անուն*/բրբռ. *անում*: Իրոք, հների համար անձի անունը հենց ինքը անձն է: Պետք է, որ մեր հեռավոր նախնիների համար անունը կարևոր խորհրդանշական իմաստ ունենար:

Պարզ արմատի ց'ի աճականով ունենք՝ հշվեդ. ange, շվեդ. ånga, դան. ange «շոգի, գոլորշի», հիյուս. angi «անուշահոտություն, բույր», նորվ. ange «անուշ հոտ», հիւլ. angi «հոտ, բույր», և հայ. *անձն*, որի առաջին իմաստն է «հոգի»:

Հայերեն *հոգի* արմատի /տարբերակներ՝ հոգ, *հով*, *հեւ*, *ոգի*/ (հ.-ե. *poixio) զուգահեռ ձևերն են՝ իսլանդ. hugur, hugir [hyjir] «խելք, միտք, հոգի, ոգի», huga «հոգ տանել», hugsa «մտածել, մտադրվել», hugsi «մտախոհ, ցրված» /հայ. *հոգս*/, hjukra «հոգալ, խնամել», angan «բույր, անուշահոտություն», դան. hygge «հոգ տանել», նորվ. heng «զգեփյուռ, թույլ քամի», հ.անգլ. hogian «հոգ տանել», լիտվ. uksmė «ստվեր», գերմ. Hauch «շունչ», hauchen «շնչել», Hege «խնամք», լիտվ. jėgà «ուժ»: Ոգի արմատին համարժեք են իսլանդ. voga «համարձակվել», veigur

«ուժ», *բնսյր*. veig «ոգելից խմիչք, գինի», ռուս. от-вага բառերը [3, 4]: Ընդունված նախածնն է հ.-ե. *roχio-, որն այս արմատի հետ անմիջական կապ չունի:

Ֆիննաուգրական լեզուներում գտնված զուգահեռ ձևերն են՝ *henki* «կյանք, հոգի, ոգի, շունչ, օդ», *henkilö* «անձ», *huoku* «շնչառություն», *joukkio* «ամբոխ», *joukko* «ամբոխ, խումբ, ժողովուրդ», *ukko* «ծերունի, պապիկ, այր մարդ», *uho* «քամի, շնչառություն», *väki* «ժողովուրդ, մարդիկ», էստոն. *hing* «հոգի, ոգի», *hingus* «շունչ», *hingama* «շնչել», *hingamine* «շնչառություն», *hõng* «շնչառություն, հոտ», *jõu/k*, *-gu* «ամբոխ», *õhk* «օդ», *õhe* «հոգոց», *ihu* «մարմին», *vägi* «բանակ, ուժ, զորություն», մարիերեն *енг* «մարդ», *йӕнг* «հոգի, սիրտ», էրզյան. *укснемс* «հոգոց հանել», խանտերեն *ики* «այր մարդ, ամուսին» [4]:

Թերևս ավելորդ չէ նշել էսկիմոս. *юк* «մարդ» /երկակի՝ *югы-к*, հոգնակի՝ *югы-т*/ արմատը:

Աճականի ավելացումից հետո տեղի է ունեցել *n* ռնգային ձայնորդի անկում, որը տիպաբանորեն հայտնի երևույթ է [5]:

Կարծես թե պարզ է *մարդ*, *անձ*, *հոգի*, *ոգի*, *շունչ*, *քամի*, *բույր* իմաստային կապը:

Իմաստային դաշտն իրականում շատ մեծ է: Նույնիսկ անձնական դերանվան *ego* տիպը առաջացել է գոյականից, և նրա նախնական իմաստն է եղել *մարդ*, *հոգի*, *անձ* [4]: Սրանից բխել են նաև այլ իմաստներ (*այր մարդ*, *ռազմիկ*, *իշխան*, *տեր*, *մարմին*, *սիրտ*, *անձ*, *զուլիս*, *ամուսին*, *թագավոր*, *առաջնորդ*, *հերոս*, *արարած*, *եղբայր*, *ուժ*, *բանակ*, *մենակ*, *խումբ*, *ամբոխ*, նաև՝ *ոգի*, *ուրվական*, *քամի*, *բույր*, *սրվեր*, *գոլորշի*, *օդ*, *միտք*, *ինքը* և այլն):

Այնուամենայնիվ, ուշադրության արժանի են *ոգի*, հետևաբար՝ նաև *ուրվական*, *հրեշտակ*, *աստված*, *դև* (չար և բարի ոգիներ) իմաստները: Այդպիսի օրինակներ են՝ շվեդ. *häxa* «կախարդ», գերմ *Hexe* «կախարդ», անգլ. *hag* «*հնցծ*. կանացի չար ոգի», ռուս. *баба-яга*, ֆիններեն *ihme* «հրեշ», կոմի *ен* «աստված», նաև հուն. *ἄγγελος* լատին. *angelus* «հրեշտակ», որից իտալ. *angelo*, անգլ. *angel* և այլն:

Հ. Աճառյանի հեղինակած ՀԱԲ-ում [1] *անձն* արմատի վերաբերյալ ուշագրավ դիտարկում կա, որը նա, ցավոք, գիտական չի համարել: Այդ այն է, որ համաձայն ՆՀԲ-ի՝ *անձն* բառի ծագումնաբանական տարբերակներից են հայերեն *ինձ* և *ինքն* արմատները, իսկ արաբերեն *ինս*, *ինսան* բառերը ծագումնաբանորեն կապվում են հայերեն *անձն* արմատի հետ [1]: Հաշվի առնելով իմաստային և հնչյունական նմանությունները՝ արաբերեն *ինս*, *ինսան* և հայերեն *անձն*, *ինձ* բառերի ծագումնաբանական ընդհանրությունը խիստ հավանական է: Սակայն 20-րդ դարի սկզբներին տարբեր լեզվաընտանիքների ծագումնաբա-

նական կապերի հարցը լրջորեն չէր քննարկվում: Ինչ վերաբերում է *ինձ* և *ինքը* արմատներին, ապա *ինձ* դերանունը ակնհայտորեն բառի քմայնացած տարբերակն է, իսկ *ինքը* բառը դժվար չէ համեմատել ֆինն. henki «կյանք, հոգի, ոգի, շունչ, օր» էստոն. hing «հոգի, ոգի», hingus «շունչ», hingama «շնչել» արմատների հետ, ինչպես նաև հշվեդ. ange, շվեդ. ånga, դան. ange «շոգի, գոլորշի», նորվ. ange «անուշ հոտ», հիսլ. angri «հոտ, բույր» բառերի հետ, որոնց առաջին իմաստն է «հոգի», և որոնք, ինչպես նշվեց, համարվում են հայերեն *անձն* բառի զուգահեռ ձևերը հ.-ե. լեզուներում: Մարդ, *անձ*, *հոգի* իմաստներից են ածանցվում նաև գերմ. Enke «ծառա», որ ծագում է միջին գերմ. քոնկե «ազարակում աշխատող ծառա» բառից, հրգ. քոնչո «ծառա», հին ֆրիզ. inka «ծառա» [6,7,8], իսլանդերեն, դանիերեն, շվեդերեն, նորվեգերեն enke «այրի» բառերը: Արդյո՞ք այս արմատը կապ չունի նաև հայ. *ինքը* դերանվան հետ: Ինչպես նշվեց, դերանունների ծագումը գոյականներից, քերականական իմաստի փոփոխման շնորհիվ, հայտնի երևույթ է: Այդպիսի օրինակները բազմաթիվ են և հ.-ե., և ֆ.-ու. Լեզուներում [4]:

Հայտնի է, որ ածանցները ժամանակին եղել են լիիմաստ բառեր, հետագայում վերացարկվելով, ձեռք են բերել քերականական իմաստ: Օրինակ, հայ. *ծայնեղ*, *հյույթեղ* բառերում –եղ ածանցի նախնական իմաստն է՝ մի բան եղող կամ մի բանից շատ ունեցող: Հայ. *ակնարկ* բառի մեջ –արկը ածանց է, նախնական իմաստն է «արկանել, նետել»: *Շնորհալի* բառը նշանակում է «շնորհով լի», *հյույթալի*՝ «հյույթով լի» և այլն: Այն պահից, երբ *արկ* և *լի* բառերն առանձին անգործածական դառնան, դրանցով կազմված բառերում նրանց իմաստը կարող է մթազնել, անգամ անհասկանալի դառնալ: Երբեմն մթազնում են բաղադրյալ բառի մի քանի բաղադրիչների իմաստները, քանի որ նրանք առանձին դառնում են անգործածական: Ակնհայտ է, որ հայ. *աշխարհ*, *խոնարհ* բառերը նախապես պարզ արմատներ չեն եղել: Սակայն ժամանակակից հայերենում անհասկանալի են ոչ միայն –արհ վերջավորությունը, այլև *աշխ-*, *խոն-* ձևությունները: Անգլերեն careful, useful, dreadful, careless, useless, homeless բառերում –ful և –less ածանցները ծագում են full «լի», less «ավելի քիչ, պակաս» բառերից և ածանցին հաղորդում են դրական (-ful) կամ բացասական (-less) իմաստ: Ածանցի իմաստը հասկանալի է միայն այն բանի շնորհիվ, որ full և less բառերը այսօր անգլերենում գործածական են: Իսկ friendly, likely բառերի –ly կազմիչի իմաստը ժամանակակից անգլերենում անհասկանալի է: Այն ծագում է հ.անգլ. –lic մասնիկից, որը նշանակում է «մարմին» (հմմտ. հայ. *լեշ*, գերմ. Leiche «դիակ», ռուս. лик, лицo), և համապատասխանում է գերմ. –lich ածանցին՝ weiblich, natürlich և այլն:

Հայտնի է, որ հայերեն *շինարար*, *ներկարար* բառերի վերջածանցը՝ –արար, *արարել* բառից է ծագում: Միևնույն ածանցը ռուսերենում որևէ իմաստ չունի,

միևնույն ժամանակ ցույց է տալիս գործողություն կատարող անձ՝ *звонарь, пахарь, пекарь*: Նույնն է բուլղարերենում՝ *хлебар* «հացթուփ», *млекар* «կաթնավաճառ» [3]:

Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում հ.-ե. որոշ լեզուներում տարածված մի ածանց, որը ցույց է տալիս ազգություն կամ պատկանելություն: Իտալացիների մեջ տարածված *Francesco* անունը նշանակում է «ֆրանկների ցեղից (սերված)»: Իտալերենում *tedesco* նշանակում է «ted ազգից, ցեղից»: Նման օրինակներից են և *բուրուշասկի* ազգի (հմմտ. սանս. *बुरुष [burusha]* «մարդ, այր մարդ, մարդ-արարած»), ինչպես նաև Պիրենեյան թերակղզում հույներից առաջ բնակված *պելագգի* հնագույն ցեղի անվանումները: Նման վերջավորություն ունի նաև *էրրուսկ* ցեղանվանումը: Այս բոլոր բառերում երկրորդ բաղադրիչը բացատրվում է իբրև «ինչ-որ ազգի պատկանող», սակայն այդպիսի արմատ այդպես էլ որևէ լեզվում չի գտնվում:

Համանման վերջավորություն ունեն ռումինական ազգանունները՝ *Radulescu, Eminescu*: Այս վերջածանցը ծագում է լատին. *-iscus* ձևից և նշանակում է «տվյալ կամ ինչ-որ ազգի/ցեղի պատկանող»: Այլ ռոմանական լեզուներում այս ածանցը ունի *-asco, -azgo, -esque, -ez* ձևերը:

Օրինաչափորեն, այս ձևույթը կարող էր վերածվել նաև որևէ ազգի կամ տեսակի պատկանելություն ցույց տվող ածականակերտ ածանցի:

Իտալ. *arabesco* «1.արաբական, 2. արաբանախոս», *burlesco* «ծիծաղաշարժ», *pittoresco* «գեղատեսիլ», *manesco* «կովարար», *pedantesco* «տառակեր», միևնույն ածանցով՝ *Francesco, tedesco* «գերմանացի, գերմանական», (հին իտալերեն՝ *todesco*. ծագում է ուշ լատին. *theodiscus* բառից < նախազերման. **biudiskaz* «ժողովրդի, ժողովրդական», **peudō* «ժողովուրդ» + *-iskaz), ռումին. *moldovenesc* «մոլդավական, մոլդավերեն, մոլդավացի», *moldovenească* «նույնը, իգ. սեռ», *rusesc* «ռուսական, ռուսերեն, ռուս», *rusească* «նույնը, իգ. սեռ»: Միևնույն ածանցով իտալերենում կազմվում են որոշ բարբառների անվանումներ՝ *romanesco, bergamasco*, նաև՝ թե ծագումով որտեղից է տվյալ անձը՝ *bergamasco, milanese*:

Լատիշերենում *vāciski* նշանակում է «գերմաներեն», լիտվերենում՝ *iškai* ածանցը ցույց է տալիս պատկանելություն որևէ երկրի կամ սոցիալական խմբի՝ *lietuviška* «լիտվերեն», *Lietuviškai* «լիտվացի», *rusiškai* «ռուսերեն», *vokiškai* «գերմաներեն»:

Գերմանական խմբի լեզուներում՝ դան. *dansk* «դանիական, դանիերեն», *engelsk* «անգլիական, անգլերեն», *fransk* «ֆրանսիական», *týsk* «գերմանական», *britisk* «բրիտանական», *elektrisk* «էլեկտրական», *økonomisk* «տնտեսական», *շվեդ. -(i)sk nitisk* «ջանասեր», *bulgarisk* «բուլղարական», *brittisk* «բրիտանական», նորվեգ. *norsk* «նորվեգերեն, նորվեգական, նորվեգացի», *engelsk* «անգ-

լերեն, անգլիական, անգլիացի», krigersk «պատերազմական», rebelsk «ապստամբ ածկն.», praktisk «գործնական», historisk «պատմական», իսլանդ. Eenska «անգլիական, անգլերեն, անգլիացի», Franska «ֆրանսիական, ֆրանսերեն, ֆրանսիացի», Íslenska «իսլանդական, իսլանդերեն, իսլանդացի», persneska «պարսկական, պարսկերեն, պարսիկ», norska «նորվեգական, նորվեգերեն, նորվեգացի», հ.իսլ. Valska «ֆրանսերեն»: Որոշ գերմանական լեզուներում –sc- հնչյունախումբը քմայնանալով, դարձել է sh /ʒ/ գերմ. Englisch, Spanisch, fantastisch, նանգլ. English, Danish, childish «երեխայական», հոլանդ. (-isch) communistisch, Russisch (հանգլ. Enzlic, Denisc, հանգլ. sceort > նանգլ. short, ship > scip, shade/shadow > sceađu, shave > sceađu, fisc > fish, wascan > wash և այլն): Իտալերենում միևնույն բայի հարացուցային ձևերում հստակ երևում է սկ > շ անցումը՝ capisco – capisci, finisco – finisci, նաև՝ pesce «ձուկ», pescatore «ձկնորս»:

Սլավոնական լեզուներում՝ բուլղար. български, враг – вражески, монах – монашески, ածանցն է -ески, լեհերենում՝ niemiecki «գերմանական, գերմաներեն, գերմանացի», Polskie «լեհերեն», սլովեն. Nemški «գերմանացի», մակեդոն. норвешки «նորվեգերեն, նորվեգական, նորվեգացի», германски «գերմանական, գերմաներեն, գերմանացի», ռուս. вражеский, русский, китайский, вражеский, княжеский, ուկր. російська, англійська, дворянський:

Միևնույն վերջավորությունն ունի գերմանական Cherusci ցեղի անվանումը: Այս ժողովուրդն ապրել է Գերմանիայի հյուսիս-արևմուտքում Ք.ա. և հետո առաջին դարերում: Բառի ստուգաբանությունն անհայտ է:

Հին անգլերեն mennisc, mænnisc «մարդկային» բառը ծագում է նախագերմ. *manniska- / *manniskaz ձևից (որից՝ հսաքս. mannisc, հ.բ.գ. mennisc, գոթ. mannisks, հ.ֆրիզ. mennisk, և այլն), *manna- (հ.-ե. *man-"մարդ") արմատից: Կիրառվել է իբրև գոյական և ածական: Միջին անգլ. mennesc, mennish, mænnisc, mannish «1. մարդ, ցեղ, ազգ, 2. մարդկային»:

«Մարդկային էակ, մարդ արարած» իմաստով այս արմատն ունի նաև հետևյալ ձևերը՝ հին ֆրիզ. mǎnn(i)ska հ.անգլ., հ.սաքսոն. mennisco հ.բ.գ. mannisco, mennisco, գերմ. Mensch, ինչպես նաև գոթ. mannisks, հ.բ.գ. mennisk, հ.սլանդ. mennskr, հ.անգլ., հ.սաքս. mennisc, որոնք ածականներ են՝ կազմված –isk- ածանցով. Նախնական իմաստն է «մարդկային ցեղին պատկանող, մարդազգի» [9]:

Այս օրինակները ցույց են տալիս, որ –asco/i, esco-/i, –azgo, –isco ձևերը կարող էին ծագած լինել ազգ արմատից, որը միայն հայերենում ունի «ազգ, ցեղ» իմաստը:

Այսպիսով, ենթադրում ենք, որ հայերեն *ազգ/ ազն* արմատը ընկած է հ.-ե. բազմաթիվ լեզուների որևէ ազգի, ցեղի, տեսակի պատկանելություն ցույց տվող –asco/í, esco-/í, -azgo, -isco -, escu, -ski, -ский ածանցի հիմքում, քանի որ այդ ածանցի ուղիղ նշանակությունն է՝ ազգ, ցեղ, տեսակ: Միևնույն լեզուներում այս մասնիկը դարձել է նաև սովորական ածականակերտ ածանց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հ.1, Երևան, 1971:
2. Etymological Dictionary of Latin and the other Italic languages, by Michiel de Vaan /Leiden Indo-European Etymological Dictionary Series, edited by Alexander Lubotsky, Vol. 7/- Leiden-Boston, 2008.
3. **Նիկողոսյան Գ.**, Հայ-ֆիննաուգրական լեզվական առնչություններ /թեկն. Ատենախոսություն/, Երևան, 2011, էջ 493-506:
4. **Նիկողոսյան Գ.**, Անձնական դերանունների ծագումը, ՀԱՊՀ Լրաբեր, գիտական հոդվածների ժողովածու, մաս 2, 2021, էջ 191:
5. **Юшманов Н.В.** Этюды по общей фонетике на материале неиндоевропейских языков // Вопросы языкознания.- 1989.- № 5.- С. 71-101.
6. Etymological Dictionary of Proto-Germanic by Guus Kroonen /Leiden Indo-European Etymological Dictionary Series, edited by Alexander Lubotsky, Vol. II.- Leiden-Boston, 2013.
7. Etymological Dictionary of the German Language (by F. Kluge).- London, 2013.
8. A Handbook of Germanic Etymology (by Orel V.).- London.Boston, 2003.
9. **Blažek V.**, Who are You, Homo Sapiens Sapiens? Human affairs, 1992, 2, p.138-149.

Г.В. НИКОГОСЯН

ЭТИМОЛОГИЯ АРМЯНСКИХ КОРНЕЙ ԱԶԳ, ԱԶՆ

Исследуются армянские корни *ազգ, ազն* которые имеют производные формы в армянском и параллельные формы в других индоевропейских языках. Установлено, что армянский корень *ազգ*, который имеет параллельные формы в пехлеви и в греческом языке только со значением «ветвь», является исконно армянским словом. В других индоевропейских языках, в частности романских, германских, славянских и балтийских, этот корень появляется в качестве суффикса прилагательных, а также в качестве суффикса в словах, показывающих принадлежность к нации, роду или указывающих их происхождение.

Ключевые слова: армянские корни *ազգ, ազն*, суффикс прилагательных, индоевропейские языки, неиндоевропейские языки.

G.V. NIKOGHOSYAN

THE ETYMOLOGY OF THE ARMENIAN ROOTS ԱՉԳ, ԱՉԼ

The Armenian roots *ազգ*, *ազն*, which have several derivative forms in Armenian and parallel forms in other Indo-European languages are investigated. It has been revealed that the Armenian root *ազգ* which has parallel forms in Pehlevi and Greek languages only with the meaning «branch», is a native Armenian word. In other Indo-European languages, particularly in Romance, Germanic, Slavonic and Baltic languages, it appears as an adjective-forming suffix or as a suffix in words denoting possession to a nation, race, kind, or denoting origin.

Keywords: *ազգ*, *ազն*, adjective-forming suffixes, Indo-European languages, non-Indo-European languages.

ՀՏԴ 81'373.6:811.19

Գ.Վ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ՆԱԽԱՐԱՐ, ՆԱՀԱՆԳ, ՆԱՀԱՊԵՏ, ԻՇԽԱՆ, ԲԴԵՉԽ, ԱՇԽԱՐՀ
ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Քննության են առնվել հայերեն *նախ-/նահ-* բաղադրիչով սկսվող մի շարք բառեր՝ նախարար, նահապետ, նահանգ, ինչպես նաև *իշխան*, *բդեչխ*, *աշխարհ* բառերը: Հայերենի և մի քանի այլ հնդեվրոպական (հ.-ե.) և ոչ հ.-ե. լեզուներում այս բառերի համեմատությունը ցույց է տալիս, որ *նախ-/նահ-* բաղադրիչի հնագույն իմաստն է *նայել*, *դիպել*, *տեսնել*: Միևնույն օրինաչափությամբ, հայերեն *իշխան*, *բդեչխ*, *աշխարհ* բառերի իրական արմատը ձևափոխությունների ենթարկված *աչք* բառն է:

Առանցքային բառեր. նախարար, նահապետ, նահանգ, իշխան, բդեչխ, աշխարհ, հնդեվրոպական լեզուներ, ոչ հնդեվրոպական լեզուներ:

Հայերենում, ինչպես ցանկացած այլ լեզվում, գոյություն ունեն բազմաթիվ բառեր, որոնք լեզվի արդի փուլում բաղադրիչների չեն բաժանվում, սակայն պատմականորեն պարզ բառեր չեն եղել: Այդ բառերի բաղադրիչները կազմող որոշ արմատներ, ածանցներ, մասնիկներ, նախնական իմաստից զրկված լինելով, այսօր անվերծանելի են: Ակներև է, որ, օրինակ, հայերեն *աշխանակ*, *աշխարակ*, *աստիճան*, *գերանդի*, *խոնարհ*, *հանդերձ*, *անտառ*, *հանգրուան*, *մակարդ*, *նպատակ*, *պատասխան*, *պարիսպ* և այլն, պարզ բառեր չեն: Այսօր բազմաթիվ նման բառեր պարզ են համարվում մեկ պատճառով՝ բարդությունը կազմող բաղադրիչներն այլևս անգործածական են, իսկ որոշ դեպքերում իմաստը լիովին մթազնած է: Որոշ դեպքերում արմատն առանձին կիրառելի է հայերենում, սակայն բարդությունն աղավաղված է և, հետևաբար, դարձյալ անվերծանելի: Որոշ, հատկապես